ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. ՀՀ գյուղատնտեսության ոլորտում 2015 թվականին գրանցվել են դրական տեղաշարժեր: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով 2015 թվականի հունվար-նոյեմբերին գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքը կազմել է 931.40 մլրդ դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 11.6 %-ով:
2. Հաշվետու տարում շարունակվել են դրական տեղաշարժերը հողային ռեսուրսների, մասնավորապես վարելահողերի օգտագործման բնագավառում: Վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը 2015 թվականին կազմել է 78.6 %, 2014 թվականի 74.4 %-ի դիմաց:
3. Գյուղատնտեսության ոլորտում տնտեսավարողների ջանքերի, բարենպաստ բնակլիմայական պայմանների և նախարարության կողմից իրականացված մի շարք պետական աջակցության ծրագրերի արդյունքում գյուղատնտեսության արտադրության ծավալների ավելացումը հանգեցրել է երկրի տնտեսական ակտիվության մեջ գյուղատնտեսության ոլորտի մասնակցության ավելացմանը:
4. Համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության մասով նախատեսված միջոցառումները կատարվել են (13 միջոցառում, 5 գերակա խնդիր): Վերոհիշյալ միջոցառումների և գերակա խնդիրների իրականացման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է առանձին՝ ՀՀ վարչապետի 2009 թվականի սեպտեմբերի 24-ի N 803-Ն որոշմամբ հաստատված ձևով (N4):

Ըստ առանձին ոլորտների կատարված աշխատանքների արդյունքներն են՝

<u>Բուսաբուծություն</u>

5. 2015 թվականին գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները կազմել են 351.3 հազ. հա, նախորդ տարվա 332.8 հազ. հա-ի դիմաց: Ցանքատարածություններն ավելացել են 18.5 հազ. հա-ով:
6. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով 2015 թվականի հունվար-նոյեմբերին բուսաբուծության համախառն արտադրանքը կազմել է 600.42 մլրդ դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 15.3 %-ով:
7. Բուսաբուծական մթերքների արտադրության ծավալները բնութագրող տվյալները ներկայացվում են ստորև.

(հազ. տոննա)

Մթերքները	2014թ.	2015թ. օպերատիվ	2015 թ. 2014 թվականի նկատմամբ, %
Հացահատիկ և հատիկաընդեղենային մշակաբույսեր	590.5	630.4	106.8
այդ թվում՝ ցորեն	338.2	369.4	109.2
Կարտոֆիլ	733.2	776.6	105.9
Բանջարեղեն	954.6	1033.8	108.3
Բոստան	245.8	286.0	116.4
Պտուղ և հատապտուղ	291.0	377.8	129.8
Խաղող	261.3	309.2	118.3
Կուտակվել է խոտ	1552.7	1560.1	100.5

8. 2015 թվականին գրանցվել է բուսաբուծական բոլոր մթերքների համախառն արտադրանքի աճ: Առավել մեծ աճ է ապահովվել պտղի և հատապտղի, խաղողի, բոստանային մշակաբույսերի, ցորենի արտադրության ուղղությամբ: Ցորենի ինքնաբավության մակարդակը գնահատվում է շուրջ 52.0-53.0 տոկոս, 2013 և 2014 թվականների համապատասխանաբար՝ 46.8 և 48.7 տոկոսի դիմաց: Բուսաբուծական մթերքների ավելացումն ապահովվել է ինչպես էքստենսիվ, այնպես էլ ինտենսիվ գործոնների հաշվին:
9. 2015 թվականին շարունակվել են իրականացվել մի շարք ծրագրեր, որոնք ուղղվել են հանրապետության գյուղատնտեսության հողային ռեսուրսների նպատակային օգտագործ-

ման մակարդակի բարձրացմանը, հացահատիկային տնտեսության զարգացմանն ու հացահատիկային մշակաբույսերի ինքնաբավության մակարդակի բարձրացմանը:

10. **«ՀՀ 2015 թվականի գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագրի»** շրջանակներում ՌԴ-ից հանրապետություն է ներկրվել 1013.8 տոննա գարնանացան գարու առաջին վերարտադրության, 59.2 տոննա առվույտի, 247.8 տոննա կորնգանի և 5.3 տոննա եգիպտացորենի սերմացու, իսկ տեղական սերմարտադրողից գնվել է 120 տոննա գարնանացան գարու էլիտային վերարտադրության սերմացու: Սերմացուի 1 կիլոգրամը հողօգտագործողներին պետական աջակցություն ցուցաբերելու նպատակով հատկացվել է պետության կողմից ձեռք բերված արժեքից 35-50 % ցածր գնով:

11. 2016 թվականին սպասվող բերքի համար կարևոր նշանակություն ունեցավ **«ՀՀ 2010-2014 թվականների ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման»** ծրագիրը, որի շրջանակներում, համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի «Տեղական սերմարտադրողներից և Ռուսաստանի Դաշնությունից աշնանացան ցորենի սերմացուի ձեռքբերման և բաշխման գործընթացը կազմակերպելու մասին» N 1001-Ն որոշման՝ վերը նշված ծրագրում 2014 թվականին ընդգրկված շահառուներից հետ է վերադարձվել 505.2 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու, ինչպես նաև այդ շահառուներից և «Գյումրիի սելեկցիոն կայանից» ձեռք է բերվել 2243.4 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու, մեկ կիլոգրամը 170 դրամ արժեքով, Ռուսաստանի Դաշնությունից գնվել է 1509 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու (ընդամենը 4257.62 տոննա), որոնք ՀՀ մարզպետարաններից ներկայացված աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացուի պահանջարկը բավարարելու նպատակով՝ մատչելի պայմաններով տրամադրվել են մինչև 3 հեկտար հողատարածք ունեցող հողօգտագործողներին: ՀՀ կառավարության վերը նշված որոշման համաձայն՝ ՀՀ-ում սորտաթարմացման նպատակով՝ աշնանացան ցորենի սերմնաբուծության, բարձր վերարտադրության սերմացուի արտադրության համար ՌԴ-ից գնվել է 40 տոննա աշնանացան ցորենի սուպերէլիտային սերմնացու և հատկացվել Հայաստանի Հանրապետության սերմարտադրողներին՝ 7 և ավելի հեկտար ջրովի վարելահող ունեցող շահառուի:

12. Գյուղատնտեսական մշակաբույսերի անհայտ ծագման սերմերի օգտագործման բացառմանը և նոր սորտերի շրջանացմանն է նպաստել **«Սերմերի որակի ստուգման և պետական սորտափորձարկման ծրագրի»** իրականացումը, որի շրջանակներում 2015 թվականի ընթացքում ստուգվել է գյուղատնտեսական մշակաբույսերի 15933 տոննա սերմ, որից հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի՝ 8976, բանջարբոստանային մշակաբույսերի՝ 26, պալարապտուղների՝ 6498, կերային մշակաբույսերի՝ 429, տեխնիկական մշակաբույսերի 0.1 տոննա և այլն: Ծրագրի իրականացումը հնարավորություն է տալիս սորտափորձարկումների միջոցով ընտրել և ՀՀ գյուղացիական տնտեսությունների համար երաշխավորել բույսերի նոր արդյունավետ սորտեր, որոնց օգտագործումը կապահովի բարձր և կայուն բերքատվություն:

13. Նշված ծրագրերի և այլ միջոցառումների իրականացման արդյունքում աշնանացանի ցանքատարածությունները, ըստ օպերատիվ տվյալների, 2015 թվականին կազմել են 116835 հա, նախորդ տարվա 111836 հա-ի դիմաց, աճը կազմել է շուրջ 5000 հա (4.5 %): Իրականացված ծրագրերի արդյունքում հացահատիկային մշակաբույսերի ցանքերում օգտագործված սերմերի շուրջ 80 %-ը սորտաթարմացվել է:

14. 2015 թվականին **«Բույսերի պաշտպանության միջոցառումների»** ծրագրի շրջանակներում, բուսասանիտարական մոնիթորինգի արդյունքները հիմք ունենալով, ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից պայքարի միջոցառումներ են իրականացվել հետևյալ ուղղություններով.

1) 2015 թվականի աշնանը կրծողների դեմ պայքարի իրականացման նպատակով ձեռք է բերվել 7900 կգ բույսերի պաշտպանության միջոց (70.3 մլն դրամ արժեքով): Պայքարի միջոցառումներ են իրականացվել 25.0 հազ. հա վնասատուներով առավել վարակված վարելահողերում և խոտհարքներում:

2) ՀՀ կառավարության 2015 թվականի ապրիլ 16-ի N 407-Ն որոշմամբ «Բույսերի պաշտպանության միջոցառումներ» ծրագրում կատարվել է փոփոխություն և «ՀՀ լոլիկի ականող ցեց և կարտոֆիլի ցեց վնասատուների մոնիթորինգի իրականացման նպատակով 2015 թվականի պետական աջակցության» ծրագրի շրջանակներում ՌԴ-ից ձեռք են բերվել 3300 ֆերոմոնային թակարդներ և օժանդակ նյութեր: Մոնիթորինգ իրականացնելու նպատակով թակարդները տեղադրվել են հանրապետության 254 համայնքներում: Մոնիթորինգի արդյունքների հիման վրա համայնքներում տարվել են խորհրդատվական աշխատանքներ՝ վնասատուի դեմ արդյունավետ պայքար կազմակերպելու ուղղությամբ:

3) Հաշվետու ժամանակահատվածում վերահսկողություն է իրականացվել ՀՀ Արմավիրի մարզի Աղավնատան, Այգեկի, Արևադաշտի, Նորապատի և Նորակերտի գյուղական համայնքներում հայտնաբերված բույսերի կարանտին վնասատու համարվող ֆիլոքսերայի (որդալվիճ) դեմ պայքարի միջոցառումների իրականացման նկատմամբ, որի նպատակով ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 30-ի N 92-Ն որոշման համաձայն, այդ համայնքների վարակված տարածքների մուտքի և ելքի մոտ տեղադրվել են ուղեփակոցներ և սահմանվել է մշտական հսկողություն, վնասատուի վերացման նպատակով քանդվել, արմատախիլ են արվել և այրվել նշված համայնքների ընդամենը՝ 9.24 հա տարածության վրա գտնվող խաղողի տնկարկները և իրականացվել են անհրաժեշտ մյուս միջոցառումները:

15. Ագրոտեխնիկական պահանջներով պարարտանյութերի օգտագործման նպատակով և երաշխավորված բերքատվության ապահովման նախադրյալների ստեղծման համար կարևորվում է **«Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման ծրագիրը»,** որի շրջանակներում 2015 թվականի ընթացքում հետազոտվել են 170 համայնքի գյուղատնտեսական նշանակության 84.9 հազ. հա հողեր: Հետազոտվող տարածքից վերցված 28.3 հազ. հողանմուշում կատարվել է 71.6 հազ. փորձաքննություն: Փորձաքննության արդյունքների հիման վրա կազմվել են 170 ագրոքիմիական քարտեզներ և մշակաբույսերի պարարտացման երաշխավորագրեր: Ծրագիրը հնարավորություն է տալիս մշակել պարարտանյութերի խնայողաբար և արդյունավետ օգտագործման վերաբերյալ գիտականորեն հիմնավորված հանձնարարականներ, որոնք տրամադրվում են համապատասխան համայնքներին:

<u>Անասնաբուծություն</u>

16. 2015 թվականին արձանագրվել է կենդանական ծագման մթերքների արտադրության որոշակի աճ: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով 2015 թվականի հունվար-նոյեմբերին անասնաբուծության արտադրանքի արժեքը կազմել է 330.98 մլրդ դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 4.7 %-ով:

17. Անասնապահական հիմնական մթերքների արտադրության ծավալների օպերատիվ տվյալները ներկայացվում են ստորև.

Մթերքները	2014թ.	2015թ. օպերատիվ	2015թ.-ը 2014թ. նկատմամբ, %
Միս (կենդանի քաշով), հազ. տոննա	163.3	175.2	107.3
Կաթ, հազ. տոննա	700.4	735.0	104.9
Ձու, մլն հատ	641.8	670.0	104.4

18. Անասնաբուծության խթանմանը նպաստել են վերջին տարիներին իրականացվող մի շարք պետական ծրագրեր: Մասնավորապես, **«Տավարաբուծության զարգացման ծրագիրը»**, որի շրջանակներում 2007-2015 թվականներին եվրոպական երկրներից հանրապետություն է ներկրվել 2067 գլուխ հոլշտին, շվից և սիմենթալ ցեղերի տոհմային երինջներ: 2015 թվականին ծրագրի շրջանակներում Ավստրիայի Հանրապետությունից ներկրվել են 257 գլուխ հոլշտին և շվից ցեղերի տոհմային երինջներ, որոնք հատկացվել են թվով 12

տնտեսավարող սուբյեկտի: Երինջների երկրորդ խմբաքանակը (453 գլուխ) կներկրվի 2016 թվականի գարնանը: Եվրոպական երկրներից ներկրված տոհմային երինջների բազայի վրա ձևավորված տոհմային տնտեսություններում իրականացվող տոհմասելեկցիոն աշխատանքների շնորհիվ «Արզնիի տոհմային ԹՏԽ», «Վամաքս» և «Ագրոհոլդինգ Արմենիա» ընկերություններում վաճառքի նպատակով իրականացվում է տոհմային երինջների աճեցում, որոնք վաճառվում են ինչպես հանրապետության գյուղացիական տնտեսություններին, այնպես էլ հանրապետությունից դուրս: 2015 թվականին, ընդհանուր առմամբ, իրականացվել է շուրջ 150 գլուխ երինջների վաճառք: Մի շարք ընկերություններում ներկրված կենդանիներից տարեկան ստացվում է 7-8 հազար կգ կաթ, որը 3-4 անգամ գերազանցում է հանրապետության միջին ցուցանիշը:

19. Նկատելի դրական տեղաշարժեր են առկա ոչխարաբուծության ոլորտում: Մանր եղջերավորների արտահանումը լուրջ խթան է ոլորտի զարգացման համար, և այդ նպատակով նախարարությունը շարունակում է աշխատանքներն ոչխարների արտահանման ծավալներն ավելացնելու և դրանց մորթի համար նախատեսված ժամանակակից սպանդանոցները շահագործելու ուղղությամբ: 2015 թվականին, ըստ օպերատիվ տվյալների, արտահանվել են 49.4 հազ. գլուխ մանր եղջերավոր կենդանիներ և 708 տոննա ոչխարի միս:

20. Միջոցներ են ձեռնարկվել խոզաբուծության զարգացման ուղղությամբ: Մասնավորապես, հանրապետության 3 տարածաշրջաններում (Կոտայք, Կապան և Երևան) կառուցվել են արդիական խոզաբուծական համալիրներ: Նշված խոզաբուծական համալիրներում բուծվում են եվրոպական երկրներից ներկրված խոզերի մսատու ուղղության ցեղերի կենդանիներ: Միայն 2015 թվականին ներկրվել է ավելի քան 450 գլուխ խոզ և այսօրվա դրությամբ նշված համալիրներում առկա է շուրջ 6000 գլուխ խոզ:

21. Նկատելի առաջընթաց է արձանագրվել հատկապես ձկնաբուծության ոլորտում: Ըստ օպերատիվ տվյալների 2015 թվականին ապրանքային ձկան ծավալը կազմել է շուրջ 15.1 հազ. տոննա, որը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցում է 1.2 հազ. տոննայով կամ 8.6 %-ով: 2015 թվականին, ըստ օպերատիվ տվյալների, հանրապետությունից արտահանվել է ավելի քան 2.0 հազար տոննա ապրանքային ձուկ: Միաժամանակ, ձկնաբուծության ոլորտում աշխատանքներ են տարվել ջրի խնայողության ռեժիմի ներդրման ուղղությամբ:

<u>Անասնաբուժության ոլորտ</u>

22. 2015 թվականին հանրապետությունում կայուն անասնահամաճարակային իրավիճակ ապահովելու, ինչպես նաև մարդկանց և կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունները կանխելու նպատակով՝ **«Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում»** ծրագրի շրջանակներում գյուղատնտեսական կենդանիների 9 հիվանդությունների (2 ախտորոշիչ, 7 կանխարգելիչ) դեմ իրականացվել է շուրջ 8.5 մլն միջոցառում: Վերջինիս արդյունքում հանրապետությունում ապահովվել է կայուն անասնաճարակային իրավիճակ:

<u>Գյուղատնտեսությունում կոոպերացիայի խթանում</u>

23. Մշակվել և ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել է **«Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքը**:

24.Նախարարության խորհրդատվական համակարգի միջոցով շարունակվել է աջակցությունը գյուղատնտեսական գործունեություն իրականացնող կոոպերատիվների ձևավորմանը և գործունեությանը: Մասնավորապես, 2015 թվականին աջակցություն է ցուցաբերվել թվով 22 գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորմանը: «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» վարկային ծրագրի շրջանակներում հանրապետության 8 մարզում ստեղծվել է շուրջ 52 արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվ:

<u>Գյուղատնտեսության ոլորտի մատչելի վարկավորում</u>

25. Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ կառավարության կողմից հաստատված **«Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման կարգին»** համապատասխան՝ գյուղատնտեսության ոլորտին տրամադրվել են մատչելի տոկոսադրույքով (14 %-ով) վարկեր, որոնց 6 տոկոսային կետը սուբսիդավորվել է:

26. 2011 թվականի ապրիլի սկզբից մինչև 2015 թվականի հոկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում գյուղատնտեսությունում տնտեսավարողներին տրամադրվել է 77.3 մլրդ դրամի 88.8 հազ. միավոր վարկ: Ընդհանուր առմամբ, վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման գումարը կազմել է 3.21 մլրդ դրամ: 2015 թվականի ընթացքում տրամադրված վարկերի գումարը կազմել է շուրջ 15.2 մլրդ դրամ:

<u>Գյուղատնտեսությունում օգտագործվող ռեսուրսների մատչելիության բարձրացում</u>

27. **«Հողօգտագործողներին 2015 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման նպատակով պետական աջակցության»** ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել 33.3 հազ. տոննա ազոտական, 1648.4 տոննա ֆոսֆորական և 564.8 տոննա կալիումական պարարտանյութեր: Պարարտանյութերը վաճառվել են շուկայականից 40-50 %-ով ցածր գներով: Ծրագրի իրականացմանն է ուղղվել 2661.5 մլն դրամ սուբսիդիա: 2015 թվականի ընթացքում իրականացվել է նաև 2014 թվականի աշնանը չբաշխված 1471.5 տոննա ֆոսֆորական և 1026.7 տոննա կալիումական պարարտանյութի բաշխումը: Հաշվետու տարվա ընթացքում մարզերում իրացվել են շուրջ 32.7 հազ. տոննա ազոտական, 2360.9 տոննա ֆոսֆորական, 856.9 տոննա կալիումական պարարտանյութեր: Ամբողջությամբ բավարարվել է մարզերի պահանջարկը:

28. **«Հողօգտագործողներին 2015 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության»** ծրագրի շրջանակներում հանրապետության հողօգտագործողներին գյուղական համայնքներում նախատեսվել է հատկացնել 14.332 մլն լիտր դիզելային վառելանյութ, 1 լիտրը 350 դրամ՝ շուկայականից որոշակիորեն ցածր գնով, ներառյալ տեղափոխման ծախսերը: Հաշվետու տարվա ընթացքում մարզերում իրացվել է 3.2 մլն լիտր դիզելային վառելանյութ:

<u>Գյուղատնտեսական հումքի մթերում, իրացում</u>

29. Ներկայումս (2015թ. հունվար-նոյեմբեր ամիսների տվյալներով) գյուղատնտեսական մթերքներ վերամշակող ոլորտին բաժին է ընկնում արդյունաբերության համախառն արտադրանքի 37.2 %-ը:

30. Մինչև մթերումների սկսելը պտուղբանջարեղեն և խաղող վերամշակող ընկերությունները գյուղացիական տնտեսությունների հետ կնքել էին 13.4 հազ. պայմանգիր, որը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցել է շուրջ 11 տոկոսով: Պայմանագրերի շրջանակներում գյուղացիական տնտեսություններին տրամադրվել է 109.8 մլն դրամ կանխավճար և 450.1 մլն դրամի բուժանյութ, պարարտանյութ և այլ օժանդակություն:

31. 2015 թվականին գյուղատնտեսական մթերք վերամշակող ընկերությունների կողմից մթերվել է 43.5 հազ. տոննա բանջարեղեն, որը գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը 27.6 %-ով, իսկ պտղի մթերումների ծավալը կազմել է 20.6 հազ. տոննա, որն ավելին է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից 48.3 %-ով:

32. 2015 թվականին խաղողի մթերումների գործընթացն ունեցել է իր առանձնահատկությունները: Մինչև մթերման գործընթացն սկսելը կատարվել է մթերվող խաղողի կանխատեսվող ծավալների մոնիթորինգ, ըստ որի՝ 2015 թվականի շուրջ 210 հազ. տոննա խաղողի մթերման առաջարկի դիմաց մթերման պահանջարկը կազմել է 160.0 հազ. տոննա: Ստեղծված իրավիճակում, խաղողի մթերման կազմակերպման համար անհրաժեշտություն առաջացավ լուծելու շուրջ 50.0 հազ. տոննա խաղողի լրացուցիչ քանակության մթերման խնդիրը:

33. Իրականացված նախապատրաստական և հետագա ամենօրյա աշխատանքի, ինչպես նաև ՀՀ Նախագահի և ՀՀ Վարչապետի անմիջական աջակցության արդյունքում՝ 2015 թվականին մթերվել է 216.8 հազ. տոննա խաղող, որը գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը 32.7 հազ. տոննայով:

34. Խաղողի մթերումների հետ կապված՝ առանձնակի պետք է կարևորել վերամշակող ընկերությունների սեփականատերերի, անկախ իրենց մոտ առկա դժվարություններին, ընդառաջ գնալու հանգամանքը:
35. Գյուղատնտեսական մթերքների իրացմանը նպաստելու համար 2015 թվականին շարունակվել է մայրաքաղաքում գյուղատնտեսական մթերքների տոնավաճառների կազմակերպումը: Երկու վարչական շրջանում հանգստյան օրերին, ընդհանուր առմամբ, կազմակերպվել է գյուղատնտեսական մթերքների շուրջ 90 տոնավաճառ:
36. Գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների աճը նպաստել է ընթացիկ տարում թարմ բուսաբուծական մթերքների արտահանման ծավալների ավելացմանը: 2015 թվականին հանրապետությունից արտահանվել է 76.7 հազ. տոննա պտուղբանջարեղեն, խաղող և կարտոֆիլ, այդ թվում՝ 34.4 հազ. տոննա պտուղ և հատապտուղ, որից՝ 21.3 հազ. տոննա ծիրան: Խաղողի արտահանման ծավալը կազմում է 13.1 հազ. տոննա, նախորդ տարվա 8.0 հազ. տոննայի դիմաց: Ընդհանուր առմամբ, արտահանման ծավալները գերազանցում են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 65.1 %-ով:
37. Արտահանման ծավալների մեջ գերակշռում է Եվրասիական տնտեսական միության երկրների մասնաբաժինը, մասնավորապես Ռուսաստանի Դաշնության բաժինը կազմում է արտահանման ընդհանուր ծավալի 83.4 %-ը, 2014 թվականի 46.4 %-ի դիմաց:

<u>Գյուղատնտեսության տեխնիկական հագեցվածություն</u>

38. ՀՀ գյուղատնտեսության նախարարության և ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից իրականացված աշխատանքների շնորհիվ 2015 թվականին ՌԴ-ից հանրապետություն է ներկրվել և տրամադրվել գյուղատնտեսությունում տնտեսավարողներին 8 հացահատիկահավաք կոմբայն: Բելառուսի Հանրապետությունից ներկրվել է 4 միավոր «ՄՏԶ-82.1» մակնիշի տրակտոր: **«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության»** վարկային ծրագրի շրջանակներում հանրապետություն է ներմուծվել և արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվներին է տրամադրվել 200 միավոր գյուղտեխնիկա, որից՝ 31 անիվավոր տրակտոր:

<u>Գյուղատնտեսական հողատեսքերի պահպանում, բարելավում և ինժեներական կառուցվածքների վերականգնում</u>

39. Կազմվել են ՀՀ Արմավիրի մարզի Ակնալիճ և Շենիկ, ՀՀ Արարատի մարզի Ջրաշեն և Արմաշ համայնքներում ոռոգման արդյունավետ եղանակների ներդրմամբ ցուցադրական տնտեսությունների հիմնման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը:
40. Հանրապետությունում շուրջ 27 հազ. հա ոռոգելի հողատարածքները գյուղատնտեսական շրջանառության մեջ ընդգրկելու համար առաջարկություններ նախապատրաստելու նպատակով՝ ՀՀ վարչապետի 2014 թվականի հոկտեմբերի 23-ի N 1035-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից 2014 թվականի հոկտեմբերից 2015 թվականի մարտ ամսին իրականացված ուսումնասիրության արդյունքներով մշակվել ու ՀՀ կառավարություն է ներկայացվել առաջարկություններ՝ Արաքս գետի վարարումների հետևանքով «Սուրենավան» սահմանապահ ուղեկալի տարածքում փլուզման վտանգի և «Ջրառատ» սահմանապահ ուղեկալի տարածքում Արաքս գետի ափապաշտպան արգելաթմբի կայունության սպառնալիքի կանխման համար անհրաժեշտ միջոցառումների վերաբերյալ:

<u>Գիտության ոլորտ</u>

41. Հաշվետու ժամանակահատվածում նախարարության գիտական կազմակերպություններում կատարվել են ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող 3 բազային ֆինանսավորմամբ ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրեր ու 2 պայմանագրային (թեմատիկ) գիտական թեմաներ, որոնց շրջանակներում գիտական հետազոտությունները հիմնականում ընթացել են գյուղատնտեսական մշակաբույսերի սելեկցիայի, սերմնաբուծության, համաշխարհային հավաքածուներից և գյուղատնտեսական հետազոտությունների միջազգային կենտրոնների սելեկցիոն տնկարաններից ստացված սորտերի, հիբրիդների ու սելեկցիոն գծերի, ինչպես նաև ոչ ավանդական մշակաբույսերի փորձարկման ու սելեկցիոն նպատակներով օգտագործման ուղղությամբ:

Խորհրդատվության ոլորտ

42. Հաշվետու ժամանակահատվածում նախարարության գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնների կողմից կազմակերպվել և անցկացվել է 1091 սեմինար և 847 դաշտային ուսուցում, իրականացվել է 21.5 հազ. խորհրդատվական միջոցառում, 149 փորձացուցադրական աշխատանք, եթեր է հեռարձակվել 94 ռադիոհեռուստահաղորդում: Տպագրվել և տարածվել է 447 անուն խորհրդատվական թերթիկ և գրքույկ՝ 128.1 հազ. ընդհանուր տպաքանակով: Թողարկվել է 156 համար թերթ՝ 207.5 հազ. ընդհանուր տպաքանակով:

43. Սեմինարների և խորհրդատվությունների մատուցման գործընթացում պարբերաբար քննարկվել է կոոպերատիվների ստեղծման թեման, անցկացվել է 330 սեմինար, սեմինարների ընթացքում քննարկվել է կոոպերատիվների ստեղծման անհրաժեշտությունը, տպագրվել և տարածվել է 32 անուն տեղեկատվական թերթիկ, իրականացվել է 6235 խորհրդատվական միջոցառում:

Գյուղատնտեսական տեխնիկայի տեսչական գործունեություն

44. Գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչության կողմից իրականացվել են աշխատանքներ գյուղատնտեսական տեխնիկայի գրանցման և պետհամարանիշների հատկացման (227 միավոր), տեխնիկայի վերագրանցման (551 միավոր), տրակտորիստ-մեքենավարի վարման իրավունքի հատկացման ուղղությամբ: Աշխատանքներ են տարվել թվով 152 սեփականատերերի համար ՀՀ բանկերում գյուղատնտեսական տեխնիկայի գրավադրման գործընթացը կազմակերպելու ուղղությամբ: Շարունակվել են աշխատանքներն գյուղատնտեսական տեխնիկայի վաչական ռեգիստրի վարման ուղղությամբ:

Միջազգային համագործակցություն

45. Շարունակվել է համագործակցությունը ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության, Համաշխարհային Բանկի, Գյուղատնտեսության Զարգացման Միջազգային Հիմնադրամի, Կենդանիների առողջության միջազգային կազմակերպության, Խաղողի և գինու միջազգային կազմակերպության, ԱՊՀ Ագրոպարենային հարցերով միջկառավարական խորհրդի, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ:

46. Մեկնարկել է Եվրոպական հարևանության **«Աջակցություն գյուղատնտեսությանը և գյուղի զարգացմանը»** (ENPARD) ծրագիրը, որի նպատակն է աջակցել գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծմանը, ինչպես նաև գործող կոոպերատիվների բիզնես կարողությունների ընդլայնմանը, տեխնոլոգիաների արդիականացմանը, շուկայավարմանը, ռիսկերի նվազեցման համակարգի ներդրմանը և այլ աշխատանքների իրականացմանը: 2015 թվականի հոկտեմբերին հաստատվել է նաև Եվրամիության և Ավստրիայի զարգացման գործակալության աջակցությամբ իրականացվող **Հայաստանում օրգանական գյուղատնտեսության զարգացման ծրագիրը**:

47. Ակտիվ համագործակցություն է ծավալվել մի շարք երկրների, մասնավորապես ԱՄՆ-ի, Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի, Ֆրանսիայի, Իտալիայի, Իրանի Իսլամական Հանրապետության, Արգենտինայի, Չիլիի և այլ երկրների գյուղատնտեսության նախարարությունների հետ, ստորագրվել են գյուղատնտեսության բնագավառում համագործացության մասին համաձայնագրեր Ավստրիայի և Քուվեյթի գյուղատնտեսության նախարարությունների հետ:

Լիցենզավորման ոլորտ

48. Հաշվետու ժամանակաշրջանում լիցենզավորման բնագավառում հիմնականում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

1) ստացվել է բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների վաճառք իրականացնելու 15 հայտ, որից տրամադրվել են 12 լիցենզիա և 3 հայտ մերժվել է,

2) ստացվել է թորած ալկոհոլային խմիչքների արտադրություն իրականացնելու 9 հայտ, որից տրամադրվել է 7 լիցենզիա, 2 հայտ մերժվել է,

3) ներկայացվել է անասնաբուժության բնագավառում օգտագործվող պատվաստանյութերի, շիճուկների և ախտորոշիչ միջոցների պետական գրանցման հավաստագիր ստանալու 18 հայտ, տրամադրվել է 18 հավաստագիր:

52. 2015 թվականին գանձվել է 574.8 մլն դրամ պետական տուրք:

Անտառային տնտեսություն

49. 2015թ. «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «անտառտնտեսություն» մասնաճյուղերում շաբաթօրյակների միջոցով իրականացվել են անտառմշակույթների հիմնադրում 14.0 հա և նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների լրացում 22.1 հա տարածքի վրա: «Հայանտառ» ՊՈԱԿ-ի սեփական եկամուտների հաշվին իրականացվել են նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների լրացում 51.0 հա, նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների խնամք 123.8 հա:

50. «Թեղուտ» ՓԲԸ-ի և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի միջև կնքված պայմանագրով «Գուգարքի անտառտնտեսություն» մասնաճյուղում իրականացվել են անտառապատման աշխատանքներ 61.2 հա տարածքում և լրացման աշխատանքներ՝ 37.2 հա տարածքի վրա:

51. Անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի աջակցությամբ «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղի նախկինում հատված 100 հա տարածքում իրականացվել են կոճղաշիվային վերաճի օժանդակման աշխատանքներ:

Սննդամթերքի անվտանգության համակարգի զարգացում

52. Մշակվել և 2015 թվականի նոյեմբերի 13-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել են «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքները՝ նպատակ ունենալով դրանց դրույթներն Եվրասիական տնտեսական միության օրենսդրության համապատասխանեցումը:

54. Մշակվել և ընդունվել է բնագավառը կարգավորող ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի 17 որոշում: Մշակվել և շրջանառության փուլում են գտնվում թվով 17 ՀՀ կառավարության որոշման նախագիծ: Մշակվել և ընդունվել են ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի թվով 8 իրավական ակտ:

53. Հանրապետության ամբողջ տարածքում իրականացվել են բուսասանիտարական հաշվառման աշխատանքներ, որի ընթացքում հաշվառվել են 502 տնտեսավարող սուբյեկտ և տվյալները մուտքագրվել են էլեկտրոնային տվյալների բազա: Տեղեկատվական բազա մուտքագրվել և ամփոփվել է սահմանային հսկիչ կետերի տեսուչների կողմից ներմուծման 3330 և արտահանման 5221 բուսասանիտարական հավաստագրերի վերաբերյալ տեղեկատվություն:

54. Իրականացվել է «Բուսասանիտարական համակարգի բարելավման և մասնագիտական գիտելիքների բարձրացման աջակցություն» ծրագրով նախատեսված դասընթացներ, որի շրջանակներում վերապատրաստվել են թվով 42 բուսասանիտարիայի գծով մասնագետ-տեսուչներ: Նույն ծրագրի շրջանակներում մշակվել և տպագրվել է 20 կարանտին վնասակար օրգանիզմների վերաբերյալ տեղեկագիրք:

55. Իրականացվել են արտադրություն, վերամշակում և (կամ) պահպանում իրականացնող 28 կազմակերպությունների և անձանց Եվրասիական տնտեսական միության անդամ մի պետությունից Եվրասիական տնտեսական միության անդամ մյուս պետություն փոխադրվող՝ հսկման ենթակա ապրանքների արտադրություն, վերամշակում և (կամ) պահպանում իրականացնող կազմակերպությունների և անձանց ՀՀ ռեեստրում գրանցման գործընթացներ:

56. ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի թվով 730 ստուգման հրամանով կատարվել են ստուգումներ: Կատարվել են դիտարկումներ և մշտադիտարկումներ ծառայության պետի 122 հրամաններով: Վարչական վարույթի 543 գործեր ենթարկվել են իրավական փորձաքննության, կայացվել են 542 վարչական տուգանք նշանակելու մասին որոշումներ, որոնցով սահմանվել է 46.4 մլն դրամի չափով տուգանք:

Վարկային ծրագրեր

«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» առաջին և երկրորդ ծրագրերի շրջանակներում 2015 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ

Առաջին ծրագրի շրջանակներում ըստ բաղադրիչների կատարվել են հետևյալ աշխատանքները.

57. Համայնքների արոտավայրերի և անասնապահության կառավարման համակարգ բաղադրիչի շրջանակներում.

1) ՀՀ 6 մարզի (Արագածոտն, Լոռի, Շիրակ, Տավուշ, Գեղարքունիք, Սյունիք) ծրագրով նախատեսված 55 համայնքի փոխարեն աշխատանքներ են իրականացվում լրացուցիչ ևս 26 համայնքում,

- 13 համայնքում արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքներն ավարտվել են (34.5 կմ ջրագիծ, 33 հատ խմոց),
- 1 համայնքում արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքները գտնվում են իրականացման փուլում (10 կմ ջրագիծ, 2 հատ խմոց),
- 38 համայնքի արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներին տրամադրվել է շուրջ 120 միավոր գյուղտեխնիկա, այդ թվում՝ 9 անիվավոր տրակտոր և 111 միավոր այլ գյուղգործիքներ,
- 6 մարզի 21 համայնքի ղեկավարների, արոտօգտագործողների կոոպերատիվների նախագահների, հաշվապահների, վեճերը լուծող անձանց, կոոպերատիվների անդամների և այլ անձանց համար (ընդամենը՝ 2665 մարդ) իրականացվել է ուսուցում՝ կապված արոտօգտագործման, կոոպերատիվի բյուջեի կազման, ֆինանսական հոսքերի կառավարման, հաշվապահական հաշվառման, կոոպերատիվի անդամների իրավունքների ու պարտականությունների մանրամասն ներկայացման և այլ թեմաներով,
- 55 համայնքի շուրջ 218 հա արոտներում ավարտվել են դեգրադացված տարածքների վերականգնողական աշխատանքները,
- 24 համայնքում իրականացվում են գյուղամերձ դեգրադացված արոտների ուսումնասիրություն:

2) Ծրագրի իրականացման արդյունքում գրանցվել են հետևյալ ցուցանիշները՝

- կաթնատվության ավելացում շուրջ 26.3 %, քաշաճի ավելացում շուրջ 18.0 %,
- կատարվել է շահառու 79 համայնքի 121.5 հազ. հա չօգտագործվող կամ թերի օգտագործվող արոտավայրերի ջրարբիացման և կենդանիների արածեցման հասանելիության ապահովման համար շուրջ 7 միլիոն ԱՄՆ դոլար ներդրում: Այդ արոտներից տարեկան ստացվում է հավելյալ շուրջ 65 հազ. տոննա չոր խոտի զանգված, որը, վերածելով կաթի և մսի, համարժեք է շուրջ 8.5 միլիոն ԱՄՆ դոլար հավելյալ եկամտի:

68. Գյուղատնտեսությանն աջակցող ծառայությունների հզորացում բաղադրիչով.

1) «Գյուղատնտեսական խորհրդատվական ծառայություններ» ենթաբաղադրիչի շրջանակներում աշխատանքներ են իրականացվում գյուղատնտեսության աջակցության հանրապետական և 10 մարզային կենտրոնների համար ուսուցողական դասընթացների կազմակերպման ուղղությամբ (ՀՀ 10 մարզի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների գյուղատնտեսության գծով տեղական խորհրդատուների մասնագիտական գիտելիքների կատարելագործման նպատակով ծրագրով նախատեսված է գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնի կողմից կազմակերպել ուսուցողական դասընթացներ: Ներկայումս դասընթացներն ընթացքի մեջ են և կավարտվեն 2016 թվականին),

2) **«Համայնքներում կենդանիների առողջությանն ուղղված ծառայություններ»** ենթաբաղադրիչի շրջանակներում իրականացվել են անասնաբուժական սպասարկման կենտրոնների կառուցման աշխատանքները (ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքում

կառուցվել է անասնաբուժական սպասարկման կենտրոն: Ավարտվել են ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի անասնաբուժական սպասարկման կենտրոնի նախագծման աշխատանքները, իրականացվում է շինարարական կազմակերպության ընտրություն: ՀՀ Շիրակի մարզի Փանիկ համայնքում իրականացվում են կենտրոնի համար հողատարածքի նկատմամբ պետական գրանցման աշխատանքները՝ հողատարածքը ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը փոխանցելու նպատակով):

59. Մրցակցային դրամաշնորհների ծրագիր բաղադրիչի շրջանակներում 2014թ. հոկտեմբերի 17-ին հայտարարվել է Մրցակցային դրամաշնորհային ծրագրերի յոթերորդ փուլի մրցույթը, և հաղթող ճանաչված 16 դրամաշնորհային ծրագրի ղեկավարների հետ կնքվել են պայմանագրեր, որից հետո կատարվել են պայմանագրերով նախատեսված առաջին մասհանումները:

Երկրորդ ծրագրի շրջանակներում ըստ բաղադրիչների կատարվել են հետևյալ աշխատանքները.

60. Համայնքների արոտավայրերի և անասնապահության կառավարման համակարգ բաղադրիչով.

1) ընդգրկվել է ՀՀ 8 մարզի (Արագածոտն, Գեղարքունիք, Լոռի, Կոտայք, Շիրակ, Սյունիք, Վայոց ձոր, Տավուշ) 55 համայնք,

2) 52 համայնքում հիմնադրվել են «Արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներ,

3) 6 համայնքում արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքներն ավարտվել են (4.7 կմ ջրագիծ, 15 հատ խմոց),

4) 11 համայնքում արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքները գտնվում են իրականացման փուլում (41.6 կմ ջրագիծ, 29 հատ խմոց),

5) 14 համայնքի արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներին տրամադրվել է շուրջ 80 միավոր գյուղտեխնիկա, այդ թվում 22 անիվավոր տրակտոր և 58 միավոր այլ գյուղգործիքներ:

61. Արժեշղթայի զարգացում բաղադրիչով իրականացված նախապատրաստական միջոցառումների արդյունքում արժեշղթաների զարգացման հանձնաժողովի անդամների քննարկմանն է ներկայացվել 23 բիզնես-հայտ, որոնցից 16 ենթածրագիր հաղթող է ճանաչվել: Ներկայումս իրականացվում է նշված ծրագրերի հավաստագրման գործընթացը:

62. **Պետական կառույցների կարողությունների հզորացում բաղադրիչով.**

1) անասնաբուժական սպասարկման կենտրոններ կառուցման ուղղությամբ ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքում իրականացվում են անասնաբուժական սպասարկման կենտրոնի համար հողատարածքի ընտրության աշխատանքներ,

2) հանրապետությունում տեղական բարձրորակ սերմերի ու սածիլների պահանջարկն ապահովելու նպատակով՝ ներկայումս վերանորոգվում են ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնի» 3000 մ^2 մակերեսով ապակեպատ ջերմատունն ու ֆիտոպաթոլոգիայի լաբորատորիայի մասնաշենքը: Ընթացքի մեջ է նաև ջերմատան համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման գործընթացը:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության 2015 թվականի գործունեությունն ուղղված է եղել ոլորտի գերակա ուղղություններին համապատասխան աշխատանքների իրականացմանը, ընթացիկ հիմնախնդիրների լուծմանը, արդյունքում՝ նախադրյալներ են ստեղծվել գյուղատնտեսության կայունության և զարգացման համար:

Գյուղատնտեսության ոլորտում ձեռքբերումների և իրականացված աշխատանքների հետ մեկտեղ առավել շատ են խնդիրները: Մասնավորապես, 2016 թվականին քաղաքականությունն ուղղվելու է հետևյալ առաջնահերթ խնդիրների լուծմանը.

- գյուղատնտեսությունում նորագույն տեխնոլոգիաների ներդրումը, մասնավորապես կաթիլային ոռոգման, կարկտապաշտպան ցանցերի ներդրման, ինտենսիվ այգիների հիմնման, արդիական տեխնոլոգիաներով ջերմոցային տնտեսությունների ընդլայնումը,
- շարունակվելու է կարևորվել գյուղատնտեսության հիմնական ռեսուրսների, մասնավորապես հողային ռեսուրսների, նպատակային և արդյունավետ օգտագործումը, ցանքատարածությունների ավելացումը,
- առաջնահերթ խնդիր է մնում երկրի պարենային անվտանգության մակարդակի բարձրացումը, առաջնահերթ անհրաժեշտ պարենամթերքների ներմուծման փոխարինումը և գյուղատնտեսական ծագման արտադրատեսակների արտաքին ապրանքաշրջանառության հաշվեկշռի բարելավումը,
- առաջիկա խնդիրների մեջ առանձնանում է տնտեսավարման ձևերի կատարելագործումը, մասնավորապես գյուղատնտեսությունում կոոպերացիայի, տնտեսավարողների համատեղ գործունեությունը խթանելու մեխանիզմների ներդրման միջոցով՝ արտադրության արդյունավետության և աշխատանքի արտադրողականության բարձրացումը,
- առաջնահերթ խնդիրներից է լինելու գյուղատնտեսական մշակաբույսերի, հատկապես հացահատիկային և կերային մշակաբույսերի սերմնաբուծության համակարգի զարգացումը, վերջինիս արդյունքում՝ բարձրորակ սերմերով հանրապետության ապահովվածության մակարդակի բարձրացումը,
- առաջնահերթ է համարվում անասնաբուծության տոհմային գործի կազմակերպումը, մասնավորապես, գյուղատնտեսական կենդանիների տոհմային և մթերատու հատկանիշների բարելավումը, արհեստական սերմնավորման գործընթացում արդյունավետ մեխանիզմների և տեխնոլոգիաների ներդրումը, ինչպես նաև անասնաբուժական համակարգի կատարելագործումը,
- գյուղատնտեսությունում տնտեսավարողների կայունության ապահովման նպատակով կշարունակվի վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը,
- կշարունակվեն մատչելի պայմաններով գյուղատնտեսության կարևորագույն ռեսուրսների մատակարարման ծրագրերը, մասնավորապես՝ դիզելային վառելանյութի, հանքային պարարտանյութերի,
- լուրջ խնդիրներից է Արարատյան դաշտավայրի ստորերկրյա ջրերի խնայողաբար օգտագործումը, որին կնպաստի ձկնաբուծությունում կիսափակ տեխնոլոգիայի ներդրումը,
- կարևորվում է նաև գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի աստիճանական ներդրման համար նախադրյալների ստեղծումը և քայլերի ձեռնարկումը,
- երկրի պարենային հաշվեկշռի բարելավման, սպառողների առողջության պահպանման, բուսաբուծական և անասնապահական ծագման արտադրատեսակների մրցունակության բարձրացման առումով շարունակվելու է սննդամթերքի անվտանգության համակարգի բարելավումը, մասնավորապես օրենսդրական հիմքերի կատարելագործումը, տեխնիկական բազայի ամրապնդումը և կադրերի ուսուցումը,
- առաջնահերթ են նաև գյուղատնտեսության մեքենայական հավաքակազմի համալրման խնդիրները, որոնց լուծմանը կուղղվեն գյուղատնտեսությունը տեխնիկական միջոցներով ապահովելու տարբեր մատչելի մեխանիզմներ: Առանձնակի ուշադրություն կդարձվի հացահատիկահավաք կոմբայնների մատակարարման մատչելի մեխանիզմների ներդրմանը:

Վերը նշված խնդիրների լուծումը նախադրյալներ կստեղծի առաջիկայում գյուղատնտեսության զարգացման և տնտեսական աճի ապահովման համար:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Միջոցառումների անվանումը**	**Միջոցառումների կատարման արդյունքը**
1	**2**	**3**	**4**
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	14	«Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին 2015 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին 2015 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2015 թվականի փետրվարի 4-ի N ՍԿ/ԿԵ/473-15 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն: Ընդունվել է ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի N 96-Ն որոշումը:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	15	«Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին 2015 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին 2015 թվականի գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2015 թվականի փետրվարի 4-ի N ՍԿ/ԿԵ/473-15 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն:

			Ընդունվել է ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի N 89-Ն որոշումը:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	16	«Պեստիցիդների և ագրոքիմիկատների արտադրությանը և շրջանառությանը ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 3-ի N 1899-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2015 թվասկանի մայիսի 5-ի N ՍԿ/ԱՇ/2900-15 գրությամբ ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի N 111-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը: ՀՀ վարչապետի 2015 թվականի մայիսի 12-ի N 02/23.14/7915-15 հանձնարարականով պահանջվել է նախագիծը ներկայացնել սահմանված կարգով, որից հետո ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2015 թվականի մայիսի 20-ի N ՍԿ/ԱՇ/3275-15 գրությամբ որոշման նախագիծը ներկայցվել է ՀՀ կառավարություն: Այնուհետև, ՀՀ վարչապետի հունիսի 10-ի N 02/23.14/9980-15 հանձնարարականով շահագրգիռ նախարարություններից պահանջվել է նախագիծը քննարկել և առաջարկությունները ներկայացնել ՀՀ գյուղատնտեսության նախարարություն: ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2015 թվականի հունիսի 17-ի N ՍԿ/ԱՀ-2/4029-15 գրությամբ ՀՀ կառավարություն է ներկայացվել որոշման լրամշակված նախագծի փաթեթը: Միաժամանակ տեղյակ է պահվել, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից սահմանված ժամկետում կարծիք չի ստացվել: ՀՀ էկոնոմիկյայի նախարարի հունիսի 18-ի N 01/14.1.2/4685-15 գրությամբ առաջարկվել է

			նախագիծը ներկայացնել տեխնիկական կանոնակարգի ձևաչափով՝ «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան՝ ելնելով «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի «Տեխնիկական կանոնակարգման ընդհանուր սկզբունքները» 51-րդ հոդվածի պահանջներից, որի համաձայն պեստիցիդները և ագրոքիմիկատներն ընդգրկված են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2011 թվականի հունվարի 28-ի N 526 որոշմամբ հաստատված միասնական ցանկում, ուստի դրանց նկատմամբ պետք է սահմանվի կատարման և կիրառման համար պարտադիր պահանջներ ընդգրկող տեխնիկական կանոնակարգ: ՀՀ վարչապետի 2015 թվականի հունիսի 19-ի N 02/23.14/10641-15 հանձնարարականով պահանջվել է նախագիծը ևս մեկ անգամ համաձայնեցնել բոլոր շահագրգիռ մարմինների հետ: Ի կատարումն նշված հանձնարարականի ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2015 թվականի հուլիսի 9-ի N ՍԿ/ԱՀ-2/4672-15 գրությամբ լրամշակված նախագծի փաթեթը ներկայացվել է ՀՀ կառավարություն՝ միաժամանակ տեղեկացնելով, որ շահագրգիռ նախարարություններից սահմանված ժամկետում կարծիքներ չեն ստացվել; Ի լրումն վերը նշված հուլիսի 9-ի գրության ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2015 թվականի հուլիսի 21-ի N ՍԿ/ԱՀ-2/5021-15 գրությամբ ՀՀ կառավարություն է ներկայաց-

			վել շահագրգիռ նախարարություններից ստացված առաջարկությունների և առարկությունների հիման վրա լրամշակված նախագծի փաթեթը: ՀՀ վարչապետի 2015 թվականի հուլիսի 23-ի N 02/23.14/12696-15 հանձնարարականով պահանջվել է նախագիծը ևս մեկ անգամ համաձայնեցնել ՀՀ էկոնոմիկայի և արդարադատության նախարարությունների հետ, անհրաժեշտության դեպքում լրամշակել, ամփոփել և ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ: ՀՀ էկոնոմիկայի և ՀՀ արդարադատության նախարարությունների համապատասխան մասնագետների մասնակցությամբ աշխատանքային քննարկման արդյունքում լրամշակված որոշման նախագիծը ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2015 թվականի օգոստոսի 5-ի N ՍԿ/ԱՀ-2/5378-15 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն: ՀՀ վարչապետի 2015 թվականի սեպտեմբերի 15-ի N 02/23.14/15689-15 հանձնարարականով պահանջվել է նախագիծը ևս մեկ անգամ համատեղ քննարկել ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ, անհրաժեշտության դեպքում լրամշակել և ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ: Ի կատարումն վերջինիս ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 22-ի N ՍԿ/ԱՀ-2/6523-15 գրությամբ ՀՀ կառավարություն է ներկայացվել ՀՀ էկոնոմիկայի նախարարության առաջարկու-

			թյամբ լրամշակված «Պեստիցիդների և ագրոքիմիկատների արտադրության, փաթեթավորման և շրջանառության տեխնիկական կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 3-ի N 1899-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի փաթեթը: Ընդունվել է ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 1195-Ն որոշումը:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	17	«Հատատեղերի հատկացման և տեղազննման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2015 թվականի հունիսի 30-ի N ՍԿ/ԱրՊ/4349-15 գրությամբ ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հատատեղերի հատկացման և տեղազննման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Ընդունվել է ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 17-ի N 1072-Ն որոշումը:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	18	«Կաթի և կաթնամթերքի անվտանգության տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից մշակվել, սահմանված կարգով շրջանառվել և ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2015 թվականի հունիսի 5-ի N ՍԿ/ԳՂ-1/3744-15 գրությամբ ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի N 111-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որով առաջարկվել է ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության

			2015 թվականի հունվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 111-Ն որոշման N 1 հավելվածի **18-րդ,** 19-րդ, 22-րդ, 24-րդ և 25-րդ կետերը: Նախագիծը ներառվել է Ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի 2015 թվականի հունիսի 18-ի նիստի օրակարգում և ՀՀ վարչապետի 2015 թվականի հունիսի 24-ի N 02/23.14/10832-15 հանձնարականով ընդունվել է ի գիտություն:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	19	«Ձեթի և ճարպի արտադրանքի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից մշակվել, սահմանված կարգով շրջանառվել և ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2015 թվականի հունիսի 5-ի N ՍԿ/ԳՂ-1/3744-15 գրությամբ ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի N 111-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որով առաջարկվել է ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 111-Ն որոշման N 1 հավելվածի 18-րդ, **19-րդ,** 22-րդ, 24-րդ և 25-րդ

			կետերը: Նախագիծը ներառվել է Ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի 2015 թվականի հունիսի 18-ի նիստի օրակարգում և ՀՀ վարչապետի 2015 թվականի հունիսի 24-ի N 02/23.14/10832-15 հանձնարականով ընդունվել է ի գիտություն:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	20	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 29-ի N 993-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 29-ի N 993-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 30-ի N ՍԿ/ԱՇ/6761-15 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն: Ընդունվել է ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 26-ի N 1403-Ն որոշումը:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	21	«Անասնաբուժական վերահսկողության իրականացման միասնական ընթացակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 4-ի N 584-Ն որոշմամբ միջոցառման կատարումը ուժը կորցրած է ճանաչվել:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	22	«Մրգային և բանջարեղենային հյութերի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից մշակվել, սահմանված կարգով շրջանառվել և ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2015 թվականի հունիսի 5-ի N ՍԿ/ԳՂ-1/3744-15 գրությամբ ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի N 111-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավա-

			ության որոշման նախագիծը, որով առաջարկվել է ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 111-Ն որոշման N 1 հավելվածի 18-րդ, 19-րդ, **22-րդ,** 24-րդ և 25-րդ կետերը: Նախագիծը ներառվել է Ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի 2015 թվականի հունիսի 18-ի նիստի օրակարգում և ՀՀ վարչապետի 2015 թվականի հունիսի 24-ի N 02/23.14/10832-15 հանձնարականով ընդունվել է ի գիտություն:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	23	«Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2015 թվականի նոյեմբերի 10-ի N ՍԿ/ՄԽ/7798-15 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն: ՀՀ վարչապետի 2015 թվականի նոյեմբերի 30-ի N 02/23.14/20310-15 պահանջվել է քննարկել ՀՀ կառավարության աշխատակազմի իրավաբանական վարչության եզրակացությունը, լրամշակել նախագիծը, ամփոփել և ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ: ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 2-ի N ՍԿ/ՄԽ/8455-15 գրությամբ օրենքի նախագծի լրամշակված տարբերակը ներկայացվել ՀՀ կառավա-

			ություն: ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 10-ի նիստում հավանություն է տրվել օրենքի նախագծին (արձանագրություն 29.7/[343475]-15 N 54) և հանձնարարվել է այն մեկօրյա ժամկետում ևս մեկ անգամ քննարկել ՀՀ ֆինանսների, ՀՀ արդարադատության և ՀՀ էկոնոմիկայի նախարարությունների հետ, խմբագրել և նախագծի լրամշակված տարբերակը սահմանված կարգով ներկայացնել ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը: ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 11-ի N ՍԿ/ՄԽ/8744-15 գրությամբ օրենքի նախագծի լրամշակված տարբերակը ներկայացվել ՀՀ կառավարություն: 2015 թվականի դեկտեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից երրորդ ընթերցմամբ ընդունվել է «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	24	«Հացահատիկի անվտանգության տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից մշակվել, սահմանված կարգով շրջանառվել և ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2015 թվականի հունիսի 5-ի N ՍԿ/ԳՂ-1/3744-15 գրությամբ ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի N 111-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

			Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որով առաջարկվել է ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 111-Ն որոշման N 1 հավելվածի 18-րդ, 19-րդ, 22-րդ, **24-րդ** և 25-րդ կետերը: Նախագիծը ներառվել է Ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի 2015 թվականի հունիսի 18-ի նիստի օրակարգում և ՀՀ վարչապետի 2015 թվականի հունիսի 24-ի N 02/23.14/10832-15 հանձնարականով ընդունվել է ի գիտություն:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	25	«Մսի և մսամթերքի անվտանգության տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից մշակվել, սահմանված կարգով շրջանառվել և ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2015 թվականի հունիսի 5-ի N ՍԿ/ԳՂ-1/3744-15 գրությամբ ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի N 111-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որով առաջարկվել է ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015

			թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 111-Ն որոշման N 1 հավելվածի 18-րդ, 19-րդ, 22-րդ, 24-րդ և **25-րդ** կետերը: Նախագիծը ներառվել է Ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի 2015 թվականի հունիսի 18-ի նիստի օրակարգում և ՀՀ վարչապետի 2015 թվականի հունիսի 24-ի N 02/23.14/10832-15 հանձնարականով ընդունվել է ի գիտություն:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	26	«Կերի շղթայի օպերատորի գործունեության վերաբերյալ եզրակացություն տալու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Կերի շղթայի օպերատորի գործունեության վերաբերյալ եզրակացություն տալու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2015 թվականի նոյեմբերի 24-ի N ՍԿ/ԱՇ/8166-15 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն:
ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**
1	**2**	**3**	**4**
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	11	Գյուղատնտեսական կենդանիների տոհմամթերատու հատկանիշների կատարելագործմանն ուղղված լայնածավալ տոհմասելեկցիոն գործընթացի շարունակականության ապահովում	**- տեղական վերարտադրության տոհմային երինջների ձեռքբերում և գյուղատնտեսությունում տնտեսավարողներին տրամադրում, զուգահեռ արտերկրից տոհմային երինջների ներկրում** 2015 թվականին շարունակվել է եվրոպական երկրներից տոհմային կենդանիների գնման գործընթացը: Տավարաբուծության զարգացման ծրագրի շրջանակներում Ավստրիայի Հանրապետությունից ներկրվել է

			256 գլուխ հոլշտին և շվից ցեղերի տոհմային երինջներ, որոնք հատկացվել են հանրապետության գյուղատնտեսությունում թվով 12 տնտեսավարող սուբյեկտի: Աշխատանքներ են տարվում երինջների երկրորդ խմբաքանակի (453 գլուխ) ներկրման ուղղությամբ, որը նախատեսվում է իրականացնել 2016 թվականի ապրիլ-մայիս ամիսներին: **- կովերի արհեստական սերմնավորման ծավալների ընդլայնում մինչև 20 հազարի** «Մխչյանի գյուղատնտեսական կենդանիների տոհմային գործի և արհեստական սերմնավորման կայան» և «Մարտունու գյուղատնտեսական կենդանիների տոհմային գործի և արհեստական սերմնավորման կայան» ՊՓԲԸ-ում շարունակվում են խորը սառեցված սերմնահեղուկի պահպանման աշխատանքները: Սերմնահեղուկն օգտագործվում է կովերի արհեստական սերմնավորման նպատակով: Ներկայումս ընկերություններում պահպանվում է 308.9 հազ. չափաբաժին սերմնահեղուկ: 2015 թվականին նշված ընկերությունների, ինչպես նաև արհեստական սերմնավորում իրականացնող այլ տնտեսավարողների կողմից իրականացվել է շուրջ 35 հազար գլուխ կովերի արհեստական սերմնավորում: **- ներկրված և տեղական վերարտադրությունից ստացված կենդանիներից տարեկան լրացուցիչ 350-400 գլուխ բարձրարժեք սերնդի ստացում և գյուղացիական**

			տնտեսությունների նախիրների համալրում Եվրոպական երկրներից ներկրված տոհմային երինջների բազայի վրա ձևավորված տոհմային տնտեսություններում իրականացվող տոհմասելեկցիոն աշխատանքների շնորհիվ «Արզնիի տոհմային ԹՏԽ», «Վամաքս» և «Ագրոհոլդինգ Արմենիա» ընկերություններում վաճառքի նպատակով իրականացվում է տոհմային երինջների աճեցում, որոնք վաճառվում են ինչպես հանրապետության գյուղացիական տնտեսություններին, այնպես էլ հանրապետությունից դուրս: 2015 թվականին իրականացվել է շուրջ 150 գլուխ երինջների վաճառք: Տոհմային մատղաշների վաճառք է իրականացվում նաև այն տնտեսավարողների կողմից, որոնք ծրագրի շրջանակներում ձեռք են բերել տոհմային երինջներ: Հանրապետության առաջավոր տոհմային տնտեսությունների կողմից («Վամաքս» ՍՊԸ, «Ագրոհոլդինգ Արմենիա» ՍՊԸ, «Արզնիի տոհմային ԹՏԽ ԲԲԸ») 2015 թվականի ընթացքում գյուղացիական տնտեսություններին են վաճառել ավելի քան 110 գլուխ տոհմային կենդանի:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	12	Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության վիճակի բարելավում	– **գյուղատնտեսական հողատեսքերի նպատակային օգտագործման մակարդակի բարձրացում, գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների ավելացում շուրջ 10 հազար հեկտարով** Հանրապետության հողօգտագործողներին տրամադրվող մի շարք պետական աջակցու-

			թյան ծրագրերի իրականացման արդյունքում 2014 թվականին ցանքատարածությունները 2010 թվականի համեմատությամբ ավելացել են 49.2 հազ. հեկտարով, կամ շուրջ 17 %-ով: Գյուղատնտեսության ոլորտում իրականացվող պետական ծրագրերը համապատասխան նախադրյալներ են ստեղծել 2015 թվականին ցանքատարածությունների ավելացման համար: Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների ցանքատարածությունները կազմել են 351.3 հազ. հեկտար, որը գերազանցում է նախորդ տարվա մակարդակը 18.5 հազ. հեկտարով, կամ աճը կազմել է 5.6 տոկոս: - **գյուղատնտեսական մշակաբույսերի սերմնապահովության ծրագրի իրականացում, հացահատիկային և կերային մշակաբույսերի նկատմամբ ՀՀ մարզերի պահանջարկի ապահովում,** ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի N 93-Ն որոշմամբ հաստատված՝ հանրապետությունում 2015 թվականի գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագրի շրջանակներում «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի միջոցով ՌԴ-ից ներկրվել է 1013,8 տոննա գարնանացան գարու առաջին վերարտադրության, 5.275 տոննա եգիպտացորենի, 59.24 տոննա կապույտ առվույտի, 247.825 տոննա կորնգանի սերմացու: Բացի այդ, «Գյումրիի սելեկ-

			ցիոն կայան» ՓԲԸ-ից գնվել է՝ 120 տոննա գարնանացան գարու էլիտային վերարտադրության սերմացու: Ծրագրով սահմանված կարգով և գներով, հիմք ընդունելով հողօգտագործողների կողմից ներկայացված վճարունակ պահանջարկը՝ 2015 թվականին հողօգտագործողներին հատկացվել է 1133.8 տոննա գարնանացան գարու, շուրջ 5.3 տոննա եգիպտացորենի, 27.0 տոննա առվույտի և 247.8 տոննա կորնգանի սերմացու: ՀՀ մարզպետարանների կողմից ներկայացված գրությունների համաձայն հողօգտագործողների կողմից վճարունակ պահանջարկի բացակայության պատճառով չիրացված՝ ՀՀ Սյունիքի մարզում 57 տոննա գարնանացան գարու, 0.15 տոննա առվույտի և 1.5 տոննա կորնգանի, ՀՀ Լոռու մարզում՝ 2.15 տոննա առվույտի և ՀՀ Տավուշի մարզում 1.191 տոննա առվույտի սերմացու 2015 թվականի հուլիսի 30-ին ՀՀ կառավարության կողմից ընդունված «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի N 93-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականի գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագրի շրջանակներում ձեռքբերված և չբաշխված սերմացուի հետագա տնօրինումը կանոնակարգելու մասին» N 842-Ն որոշմամբ կհատկացվեն 2016 թվականի գարնանացան աշ-

			խատանքների կազմակերպման համար, իսկ 32,256 տոննա առվույտի սերմացուն պահեստավորվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ում: Պետական աջակցություն ցուցաբերելու նպատակով սերմացուն հատկացվել է պետության կողմից ձեռք բերված արժեքից ավելի ցածր գներով՝ գարնանացան գարին ձեռք է բերվել 1 կգ-ը 324,6 դրամով, հողօգտագործողներին տրամադրվել՝ 130 դրամով, եգիպտացորենը՝ 932,6 դրամով, հողօգտագործողներին տրամադրվել՝ 350 դրամով, առվույտը ձեռք է բերվել 2695 դրամով, տրամադրվել է՝ 1500 դրամով, իսկ կորնգանը ձեռք է բերվել 562,9 դրամով, տրամադրվել՝ 370 դրամով: Պարենային ապահովության մակարդակի բարձրացման, սննդամթերքի անվտանգության և հիմնական պարենային մթերքների ինքնաբավության նվազագույն մակարդակի ապահովման նպատակով համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի «Տեղական սերմնարտադրողներից և Ռուսաստանի Դաշնությունից աշնանացան ցորենի սերմացուի ձեռքբերման և բաշխման գործընթացը կազմակերպելու մասին» N 1001-Ն որոշման, Հայաստանի Հանրապետությունում 2010-2014 թվականների սերմնաբուծության և սերմարտադրության ծրագրում 2014 թվականին ընդգրկված շահառուներից հետ է վերադարձվել 505,2 տոննա աշնանացան ցորենի

			առաջին վերարտադրության սերմացու, ինչպես նաև նախորդ տարի վերը նշված ծրագրում ընդգրկված շահառուներից և «Գյումրիի սելեկցիոն կայան» փակ բաժնետիրական ընկերությունից ձեռք է բերվել 2243,42 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու, մեկ կիլոգրամը՝ 170 դրամ արժեքով, Ռուսաստանի Դաշնությունից՝ գնվել է 1509 տոննա (700 տոննա «Կրասնոդարսկայա 99», 669 տոննա «Վասսա» և 140 տոննա «Յուկա») աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու, որը տրամադրվել է ՀՀ մարզպետարաններից ներկայացված աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացուի պահանջարկը բավարարելու նպատակով 2015 թվականին ՀՀ մարզպետարաններից ներկայացված վճարունակ պահանջարկի հիման վրա՝ մինչև 3 հեկտար հողատարածք ունեցող հողօգտագործողներին 2016 թվականին բերքահավաքից հետո 1:2 փոխհարաբերությամբ, կամ մեկ կիլոգրամը 160 դրամ հետ վերադարձնելու պայմանով: ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի «Տեղական սերմնարտադրողներից և Ռուսաստանի Դաշնությունից աշնանացան ցորենի սերմացուի ձեռքբերման և բաշխման գործընթացը կազմակերպելու մասին» N 1001-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում սորտաթարմացման նպատակով աշնանացան ցորենի սերմնաբուծության, բարձր վերարտադրության սերմացուների

			արտադրության համար Ռուսաստանի Դաշնությունից գնվել է 40 տոննա (20 տոննա «Կրասնոդարսկայա 99», 13 տոննա «Վասսա» և 7 տոննա «Յուկա») աշնանացան ցորենի սուպերէլիտային սերմացու և հատկացվել Հայաստանի Հանրապետության սերմարտադրողներին՝ 7 և ավելի հեկտար ջրովի վարելահող ունեցող շահառուներին, որոնք կբավարարեն ցորենի սերմնաբուծության Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2005 թվականի սեպտեմբերի 29-ի N 164-Ն հրամանով հաստատված պահանջները, կապահովեն սերմնաբուծության բոլոր ագրոտեխնիկական կանոնների պահպանումը և դրանց գրանցումը կազմակերպության կողմից տրամադրված ագրոտեխնիկական միջոցառումների և դիտարկումների գրանցամատյանում, ինչպես նաև 2016 թվականին բերքահավաքից հետո մինչև սեպտեմբերի 1-ը, 1:2 փոխհարաբերությամբ աշնանացան ցորենի էլիտա սերմացուի վերադարձը: – **գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի (1-2%) և կենդանական ծագման մթերքների արտադրության ծավալների (4-5%) աճի ապահովում** 2015 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ արձանագրվել է կենդանական ծագման մթերքների արտադրության ծավալների ավելացում: Մսի իրացման ծավալներն ավելացել են 2.4 %-ով և կազմել 94.5

			հազ. տոննա, կաթինը՝ 4.2 %-ով և 673.9 հազ. տոննա, ձվինը՝ 3,2 %-ով և 597.8 մլն հատ: Ընդհանուր առմամբ 2015 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսներին անասնապահության համախառն արտադրանքը գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը 3.6 %-ով: Ըստ կանխատեսումների 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ նախորդ տարվա համեմատությամբ հանրապետությունում տավարի գլխաքանակի աճը կկազմի 1.9 % և կկազմի 701.6 հազ. գլուխ, որից կովերինը՝ 1.4 % և 318.4 հազ. գլուխ, ոչխարներինն ու այծերինը՝ 2 % և 760.0 հազ. գլուխ, խոզերինը՝ 2.1 % և 145.4 հազ. գլուխ: Օպերատիվ տվյալներով կենդանական ծագման մթերքների արտադրության ծավալներըկազմել են՝ մսինը՝ 175.2 հազ. տոննա, կաթինը՝ 735.0 հազ. տոննա, ձվինը՝ 670 մլն հատ: – **արդյունագործական ձկնաբուծության խթանում և ձկան արտադրության ծավալների ավելացում (15-20%)՝ ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմամբ** Ըստ օպերատիվ տվյալների 2015 թվականին հանրապետությունում ապրանքային ձկան արտադրության ծավալը աճել է նախորդ տարվա համեմատ 8.6 %-ով և կազմել 15.1 հազ. տոննա: Ձկնաբուծության ոլորտում ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ ՄԱԿ-ի՝ պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը մշակել է ծրագիր՝ Արարա-

			տյան հարթավայրի 1 ձկնաբուծարանում ջրի կիսափակ շրջապտույտով համակարգի ներդրման ուղղությամբ: Ծրագիրը հաստատվել է և գտնվում է նախագծա-նախահաշվային փուլում: - **գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորմանն ու զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացում, գյուղատնտեսական ուղղվածության շուրջ 30 կոոպերատիվի ձևավորում** Գյուղատնտեսական աջակցության մարզային կենտրոնների (ԳԱՄԿ) կողմից հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է 330 սեմինար և 6235 խորհրդատվական միջոցառում, տպագրվել՝ 32 անուն տեղեկատվական թերթիկ: «Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ի (ԳԱՀԿ) կողմից «Ագրոլրատու» շաբաթաթերթում կոոպերատիվների ստեղծման կարևորության վերաբերյալ տպագրվել է 32 հոդված: ԳԱՄԿ-ի աջակցությամբ ստեղծվել է 22 կոոպերատիվ: «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» երկրորդ ծրագրի շրջանակներում ՀՀ 8 մարզերի (Արագածոտն, Լոռի, Շիրակ, Տավուշ, Գեղարքունիք, Սյունիք, Կոտայք, Վայոց ձոր) 52 համայնքում հիմնադրվել են արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներ, որոնք գրանցվել են իրավաբանական անձերի պետական ռեգիստրում: «Համայնքների գյուղատնտեսական ռե-

			սուրսների կառավարման և մրցունակության» երկու ծրագրերի շրջանակներում 52 համայնքի արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներին տրամադրվել է շուրջ 200 միավոր գյուղտեխնիկա, այդ թվում 31 անիվավոր տրակտոր և 169 միավոր այլ գյուղգործիքներ:
	13	Անասնապահության մասնագիտացում ունեցող գյուղական համայնքներին աջակցության ընդլայնում	- **հեռագնա արոտների անցանելիության ապահովմանը, ջրարբիացմանը, արոտների վերականգնմանն ուղղված միջոցառումների շարունակում** «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում ՀՀ 6 մարզի (Արագածոտն, Լոռի, Շիրակ, Տավուշ, Գեղարքունիք, Սյունիք) 55 համայնքի փոխարեն աշխատանքներեն իրականացվում լրացուցիչ ևս 26 համայնքում՝ • 13 համայնքում արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքներն ավարտվել են (34.5 կմ ջրագիծ, 33 հատ խմոց), • 1 համայնքում արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքները գտնվում են իրականացման փուլում (10.0կմ ջրագիծ, 2 հատ խմոց), • 55 համայնքի շուրջ 218 հա արոտներում ավարտվել են դեգրադացված տարածքների վերականգնման աշխատանքները: «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» երկրորդ ծրագրի շրջանակներում ՀՀ 8 մար-

			զերում (Արագածոտն, Լոռի, Շիրակ, Տավուշ, Գեղարքունիք, Սյունիք, Կոտայք, Վայոց ձոր) իրականացվել են հետևյալ աշխատանքները՝ • 6 համայնքում արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքներն ավարտվել են (4.7 կմ ջրագիծ, 15 հատ խմոց), • 11 համայնքում արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքները գտնվում են իրականացման փուլում (41.6 կմ ջրագիծ, 29 հատ խմոց), • 22 համայնքի կառավարման պլանները հաստատվել են Համաշխարհային բանկի կողմից: - **համայնքներում արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվների ձևավորում և ստեղծված արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվների կարողությունների հզորացմանն ուղղված միջոցառումների իրականացում:** **Կոոպերատիվներին կտրամադրվի 150 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, որից 25-ն անվավոր տրակտոր,** «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» երկու ծրագրերի շրջանակներում 52 համայնքի արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներին տրամադրվել է շուրջ 200 միավոր գյուղտեխնիկա, այդ թվում 31 անիվավոր տրակտոր և 169 միավոր այլ գյուղգործիքներ: ՀՀ 6 մարզի 21 համայնքի ղեկավարների,

			արոտօգտագործողների կոոպերատիվների նախագահների, հաշվապահների, վեճերը լուծող անձանց և կոոպերատիվների անդամների, խորհրդի, կոմիտեի և համայնքապետարանի ներկայացուցիչների համար (ընդամենը՝ 2665 մարդ) իրականացվել է ուսուցում՝ կապված արոտօգտագործման, կոոպերատիվի բյուջեի կազմման, ֆինանսական հոսքերի կառավարման, հաշվապահական հաշվառման, կոոպերատիվի անդամների իրավունքների ու պարտականությունների մանրամասն ներկայացման, էկոլոգիայի վրա բացասական ազդեցության կանխման և հողերի դեգրադացման դեմ պայքարի ու արոտների բարելավման, ինչպես նաև համապատասխան օրենսդրական դաշտի ներկայացման և այլ թեմաներով: - **ՀՀ մարզերում համապատասխան սարքավորումներով հագեցված անասնաբուժական սպասարկման 2 կենտրոնի հիմնում** «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքում կառուցվել է անասնաբուժական սպասարկման կենտրոն: Ավարտվել են ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի անասնաբուժական սպասարկման կենտրոնի նախագծման աշխատանքները, իրականացվում է շինարարական կազմակերպության ընտրություն: ՀՀ Շիրակի մարզի Փանիկ համայնքում իրականացվում են կենտրոնի համար հողատարածքի նկատ-

			մամբ պետական գրանցման աշխատանք-ները՝ հողատարածքը ՀՀ գյուղատնտեսու-թյան նախարարությանը փոխանցելու նպա-տակով: - **տոհմային և անասնաբուժական աշխա-տանքների բարելավման միջոցառումների շարունակում** 2015 թվականին շարունակվել է եվրոպա-կան երկրներից տոհմային կենդանիների գնման գործընթացը: Տավարաբուծության զարգացման ծրագրի շրջանակներում Ավստրիայի Հանրապետությունից ներկրվել է 256 գլուխ հոլշտին և շվից ցեղերի տոհմային երինջներ, որոնք հատկացվել են հանրա-պետության գյուղատնտեսությունում թվով 12 տնտեսավարող սուբյեկտի: Աշխատանքներ են տարվում երինջների երկրորդ խմբաքանակի (453 գլուխ) ներ-կրման ուղղությամբ, որը նախատեսվում է իրականացնել 2016 թվականի ապրիլ-մայիս ամիսներին: Հանրապետությունում 2015 թվականի դեկ-տեմբերի 1-ի դրությամբ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջա-նակներում իրականացվել են հետևյալ կան-խարգելիչ և ախտորոշիչ միջոցառումները՝ **կանխարգելիչ միջոցառումներ.** խոշոր եղջերավոր կենդանիների սիբի-րախտ հիվանդության նկատմամբ պատվաս-տում՝ 1073065 գլուխ, խոշոր եղջերավոր կենդանիների դաբաղ հիվանդության նկատմամբ պատվաստում՝

			1650624 գլուխ, խոշոր եղջերավոր կենդանիների խշխշան պալար (էմկար) հիվանդության նկատմամբ պատվաստում՝ 11242071 գլուխ, խոշոր եղջերավոր կենդանիների պաստերելոզ հիվանդության նկատմամբ պատվաստում՝ 70443 գլուխ, մանր եղջերավոր կենդանիների սիբիրախտ հիվանդության նկատմամբ պատվաստում՝ 14006 գլուխ, մանր եղջերավոր կենդանիների դաբաղ հիվանդության նկատմամբ պատվաստում՝ 265191 գլուխ, խոզերի դասական ժանտախտ հիվանդության նկատմամբ պատվաստում՝ 625182 գլուխ, թռչունների կեղծ ժանտախտ հիվանդության նկատմամբ պատվաստում՝ 2029536 գլուխ: **ախտորոշիչ միջոցառումներ**. խոշոր եղջերավոր կենդանիների բրուցելոզ հիվանդության նկատմամբ ախտորոշիչ հետազոտություն՝ 357930 գլուխ, մանր եղջերավոր կենդանիների բրուցելոզ հիվանդության նկատմամբ ախտորոշիչ հետազոտություն՝ 375182 գլուխ, խոշոր եղջերավոր կենդանիների տուբերկուլյոզ հիվանդության նկատմամբ ախտորոշիչ հետազոտություն՝ 14890 գլուխ: Ծրագրի շրջանակներում բաշխվել են ախտահանիչ միջոցներ, անասնաբույժ-մասնագետների կողմից համայնքներում իրակա-

			նացվել են ախտահանման աշխատանքներ: **- իրականացվող միջոցառումներում նոր մարզերի (ՀՀ Կոտայքի և ՀՀ Վայոց ձորի) ընդգրկում** «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» երկրորդ ծրագրի շրջանակներում ՀՀ 8 մարզում (Արագածոտն, Գեղարքունիք, Լոռի, Կոտայք, Շիրակ, Սյունիք, Վայոց ձոր, Տավուշ) իրականացվել են հետևյալ աշխատանքները. • 52 համայնքում հիմնադրվել են «Արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներ, որոնք արդեն գրանցվել են իրավաբանական անձերի պետական ռեգիստրում, • 22 համայնքի կառավարման պլանները հաստատվել են Համաշխարհային Բանկի կողմից, • 6 համայնքում արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքները ավարտվել են (4.7 կմ ջրագիծ, 15 հատ խմոց), • 11 համայնքում արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքները գտնվում են իրականացման փուլում (41.6 կմ ջրագիծ, 29 հատ խմոց), • 14 համայնքի արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներին տրամադրվել է շուրջ 80 միավոր գյուղտեխնիկա, այդ թվում 22 անիվավոր տրակտոր և 58 միավոր այլ գյուղգործիքներ,

			• ՀՀ Վայոց ձորի և ՀՀ Կոտայքի մարզերի գյուղական համայնքներում իրականացվել են սկզբնական ժողովների անցկացման միջոցառումները:
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	14	Ձկան և մեղրի մեջ մնացորդային նյութերի հսկողության մոնիթորինգային ծրագրի իրականացում	**- ձկան մեջ մնացորդային նյութերի հսկողության մոնիթորինգային պլանի կազմում** Արձակվել են ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2015 թվականի մարտի 27-ի «Ձկան մեջ մնացորդային նյութերի հսկողության պլանը հաստատելու մասին» N 298-Ա և 2015 թվականի հունիսի 12-ի «Անասնահամաճարակային մշտադիտարկում և նմուշառում իրականացնելու մասին» N 642-Ա հրամանները, որոնց համաձայն կազմվել է ձկան մեջ մնացորդային նյութերի հսկողության մոնիթորինգային պլանը: **- մեղրի մեջ մնացորդային նյութերի հսկողության մոնիթորինգային պլանի կազմում** 2015 թվականի սեպտեմբերի 18-ին արձակվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի «Մեղրում մնացորդային նյութերի հսկողության պլանը հաստատելու, անասնահամաճարակային մշտադիտարկում և նմուշառում իրականացնելու մասին» N 996-Ա հրամանը, որի համաձայն մեղվաբուծությամբ զբաղվող տնտեսություններում իրականացվել է մոնիթորինգ և նմուշառում: - **սահմանված կարգով նմուշառում և**

			նմուշների ներկայացում լաբորատոր փորձաքննության 2015 թվականի հունիսի 15-ից մինչև հուլիսի 31-ը ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմի Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի, Շիրակի և Գեղարքունիքի մարզային կենտրոնների մասնագետ-տեսուչների կողմից իրականացվել է անասնահամաճարակային մշտադիտարկում և նմուշառում՝ ձուկ արտադրող, իրացնող և արտահանող թվով 97 ձկնաբուծական տնտեսություններում: Ընդհանուր առմամբ իրականացվել է 144 նմուշառում: **- մնացորդային նյութերի բացահայտման և հաստատման լաբորատոր հետազոտությունների իրականացում** Նմուշառման արդյունքում վերցված նմուշներն ուղարկվել են ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության «Հանրապետական անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ՝ լաբորատոր փորձաքննության: Արդյունքները կամփոփվեն 2016 թվականի առաջին եռամսյակում:
	15	Բուսասանիտարական համակարգի բարելավման և մասնագիտական գիտելիքների բարձրացման ծրագրի իրականացում, բուսասանիտարական հաշվառում	- **բույսերի վնասակար օրգանիզմների հայտնաբերման, նույնականացման և լաբորատոր փորձաքննության մակարդակի բարձացման նպատակով ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության**

			բուսասանիտարական մասնագետների ուսուցում, Բուսասանիտարական համակարգի բարելավման և մասնագիտական գիտելիքների բարձրացման ծրագրի շրջանակներում 2015 թվականի սեպտեմբերի սկզբից մեկնարկել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության բուսասանիտարիայի գծով մասնագետ-տեսուչների վերապատրաստման դասընթացների փուլը: 40 ժամյա ծրագրով բույսերի վնասակար օրգանիզմների հայտնաբերման, նույնականացման և լաբորատոր փորձաքննության մակարդակի բարձացման նպատակով վերապատրաստվել են ծառայության թվով 42 բուսասանիտարիայի գծով մասնագետ-տեսուչներ: Ծրագրով նախատեսված մասնագիտական ուսուցման հետ մեկտեղ մասնագետ-տեսուչները այցելել են նաև սահմանային հսկիչ կետեր և մարզային կենտրոններ: Նույն ծրագրի շրջանակներում մշակվել և տպագրվել է 20 կարանտին վնասակար օրգանիզմների վերաբերյալ տեղեկագիրք: - **գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական և իրավաբանական անձանց բուսասանիտարական հաշվառում,** ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության բուսասանիտարիայի գծով մասնագետ-տեսուչների կողմից հանրապետության ամբողջ տարածքում իրականացվել

			է գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական և իրավաբանական անձանց բուսասանիտարական հաշվառում: Հաշվետու ժամանակահատվածում հաշվառվել է 502 տնտեսավարող սուբյեկտ: Տվյալները մուտքագրվել են էլեկտրոնային ՎԵԳԵՓԱՍ (VEGEPAS) տվյալների բազա: - **բուսասանիտարական հսկողության կազմակերպման և բուսասանիտարական իրավիճակի գնահատման նպատակով բուսասանիտարիայի բնագավառում հաշվառման ենթակա տվյալների հավաքագրում, դասակարգում, պահպանում, բազայի ստեղծում և վարում** Բուսասանիտարական հսկողության կազմակերպման և բուսասանիտարական իրավիճակի գնահատման նպատակով բուսասանիտարիայի բնագավառում գործունեություն իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձանց հաշվառման տվյալները հավաքագրվել, դասակարգվել, թարմացվել և պահպանվել են հաշվառման էլեկտրոնային բազայում: